

Հանձքէն զրկուելու վտանգի մէջ է, ձեռք ձգեց Սուլթանական հրամանագիր մը ուղղուած՝ Կարնոյ Կառավարչին, որպէսզի Պարսկաստան վերադարձող իր մարդոց ամէն հարկ եղած օգնութիւնն ընծայէ վճարումը յաջողցնելու զխտումով։ Բաշան անոնց յանձնարարականներ տուաւ Երեւանի իմանին համար։ Այս նամակները քիչ օգնեցին։ Եւ որովհետեւ Պարսկաստանի մէջ դատաւորները խիստ դանդաղօրէն կ'ընթանան եւ տեղերու հեռաւորութիւնը շատ կը յամեցնէ դործերը, թուրք մաքսական պաշտօնեաները տարի մը Երեւան մնացին ապարդիւն կերպով։ Ապա նոր յանձնարարական նամակներ ստացան Մեծ Վեզիրէն, Կ. Պոլսոյ Գալմադամէն եւ Կարնոյ Բաշայէն, Երեւանի Կառավարչին համար։ Այս գրութիւնները այնչափ խիստ ու ստիպողական էին որ Կառավարիչը խոռովեցաւ։ Ան իր մօտ կանչեց Պատրիարքը եւ անոր բնաւ՝ թէ հարկ էր անպայման վճարել 80.000 ոսկիները։ Պատրիարքը՝ որ իրօք անկարող էր հատուցանելու, ամենայնոակ կերպով ցոյց տուաւ Կառավարչին իր անկարողութիւնը, եւ թախանձագին խնդրեց որ իրեն համար Արքունիքէն արտօնութիւն ստանայ այդ գումարը դանձելու Մարաստանի եւ Վրաստանի եկեղեցիներէն։ Կառավարչին բաղմաթիւ նուէրներ տուաւ, որպէսզի զայն բարոյապէս պարտաւորէ իր խնդրանքը կատարելու։ Կառավարիչը հաւանեցաւ վերջապէս։ Խնդրեց եւ ստացաւ այդ արտօնութիւնը։ Հազիւ թէ արտօնագիրը հասաւ, Յաւ-